

ՎԱՍԻԼԵՎ Պ. Պ.

ԱՄՐԱԿՈՆԴԵԼ  
ԿՈԼՏՍՏԱՆԻՔՅԱՆ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԲՐԻԳԱԴԵԼ



8.1 (47)  
4-26

Ա 399  
Հ Օ Ւ Ր Ե Վ Ե Կ Պ Ա Հ

7 FEB 2010

# ԱՐԱՊՆԴԵԼ ԿՈԼԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԸ

ՀԽԱ Ա Խ Ո Ւ Ր Ա Կ  
И Н С Т И Т У Т А  
В О С Т О Н Е В Д Е С С Е Р  
Академия Наук  
С С С Р

## ԿՈԼԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԻՇՏ ԿԱԶ- ՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԸ—ԴԱ ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԴԱՍՍ- ԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՖԱՐԻ ՀԱՐՑ Ե

Կուլակությունը վճռականապես պարտություն կրելով համատարած կոլեկտիվացման ժամանակ և հիմնականում վորպես դասակարգ վերացված լինելով նրա հիմնան վրա, իր պայքարի ամբողջ կենտրոնը փոխազրեց կոլտնտեսային արտադրություն, սկսեց կատաղի փորձեր անել կոլտնտեսությունը ներսից պայթեցնելու համար:

Դյուզում դասակարգային պայքարի նոր ձևերը նրանում են կայանում, վոր կուլակության ջարդու փշուրարված, բայց դեռևս դիմագրելու փորձեր անող ննացորդները սողոսկում են կոլտնտեսություն և ձգտում են իրենց զնաւարարական աշխատանքը կատարել նրա ներսում:

Կուլակը պարտվեց իր այն փորձերում, վորոնցով նա աշխատում էր դյուզի չքափորմիջակ մասսաներին հետ պահել կոլոնտեսություն մտնելուց: Զախշախված են նաև նրա մյուս փորձերը, վորոնց նպատակն եր՝ քայլայի կոլտնտեսությունները՝ սրանց զարգացման առաջին, կազմակերպչական շրջանում:

«Այժմ արդին հարցը նրանում չե, թե կոլտնտեսությունները պիտի լինեն թե չլինեն—այս հարցն արդեն լուծված է դրականապես: Կոլտնտեսություններն ամրապնդված են և վերջնականապես փակված ե ճանապարհը դեպի հին, աֆրատական տնտեսությունը»:

(ՍՊԱՀԱՆ)

Այժմ կուլակությունն իր բոլոր ուժերը լարում և աշխատանքի ճիշտ կազմակերպումը, աշխատանքի դիսցիպ-  
լինան վիճեցնելու, կոլտնտեսային ինչը հափշտակելու,  
պետական առաջադրությունները վիճեցնելու համար:

«Թշնամին հասկացավ փոխված դրությունը, հաս-  
կացավ գյուղում նոր կառուցվածքի ույժն ու զորեղու-  
թյունը և, հասկանալով այդ, վերակազմակերպվեց,  
փոխեց իր գործելակերպը, —կոլտնտեսությունների  
գեմ ուղղակի գրոհից անցավ կամացուկ չարախոսու-  
թյան աշխատանքին»:  
(ՍՑԱ. Խ. Ն.)

Ամենաչնչին շեղումը լինիսյան դիրքերից, դասակար-  
գային արթնության ամենաչնչին թուլացումն խկույն և  
յեթ ոգտագործում և դասակարգային թշնամին, ուժեղաց-  
նում և իր դիմադրությունը. կուլակը և նրա գործակալու-  
թյունը հարավորություն են ստանում սոլուկի կոլտն-  
տեսություն, դեկավարման մեջ խցկել իրենց մարդկանց:

Կուլակները, սպիտակ-դվարդիքականները սողոսկերով  
կոլտնտեսության դեկավարության մեջ, նրան տալիս են  
այսպիսի մի ձև, վորը քողարկում և նրանց հականեղափա-  
խական գործունեցությունը:

«Կոլտնտեսությունները, վորպես տնտեսության  
կազմակերպման սոցիալիստական ձև, կարող են ցույց  
տալ տնտեսական շինարարության հրաշքներ, յեթե  
նրանց գլուխն են կանգնած խական հեղափոխական  
—բոլշևիկներ—կոմունիստաներ և ընդհակառակը, կոլ-  
տնտեսությունները վորոշ շրջանում կարող են դառ-  
նալ ամեն տեսակ հականեղափոխական աղղեցություն-  
ների թագատոց, յեթե այստեղ գործ տեսնեն եսերներն  
ու մենշերիկները, պետայուրովյան սպաները և այլ  
սպիտակ-դվարդիքականները»:  
(ՍՑԱ. Խ. Ն.)

Կուլակության մասցրդները և նրա գործակալությունը,  
ոգտելով առանձին ստորին կուտղակների գասակարգա-  
յին արթնության թուլացումից, խցկեցին կոլտնտեսու-  
թյունները և նույնիմէ հարազացան այստեղ գրավել բրի-

գաղիրների, հաշվառիչների, պահեստապետների, տնտեսնե-  
րի, հաճախ և կոլտնտվարչության անդամների զեկավար  
ու տնտեսական պաշտոնները և այնտեղ ծավալեցին իրենց  
մասարարական աշխատանքը, կամացուկ չարախոսու-  
թամբ քայլայելով կոլտնտեսությունը ներսից, նրան վե-  
րածելով կուլակային զենքի, վորն ողագործվում և խոր-  
հրդային իշխանության միջոցառումները վիճեցնելու հա-  
մար (հացամթերումներ, ցանք): Յեթե առաջ, համատարած  
կոլեկտիվացման ժամանակաշրջանում, կուլակը՝ պայտա-  
րեն դուրս եր գալիս կոլտնտեսության դեմ, ապա այժմ  
նա իր ազգեցությունն ուժեղացնում և կոլտնտեսության  
ներսում, ողտագործում և ուղցնում և կոլտնտեսականների,  
յերեկվա մենատնտեսների, մանր-սեփականատիրական, ան-  
հատական տրամադրությունները:

«Յերբ մնատնտեսը մտավ կոլտնտեսություն  
կուլակ, յենթակուլակը, ողտագործելով, չարաշահելով  
կոլտնտեսականի՝ յերեկվա մենատնտեսի մանր-սեփա-  
կանատիրական հոգերանությունը, անում և ամեն ինչ,  
վորպեսզի քայլայի աշխատանքային զիսցիպլիկնան,  
սովորեցնում և աշխատել վոչ թե վորպես իրեն, այլ  
ուրիշի անտեսության համար, սովորեցնում և աշխատե-  
քիչ, աշխատե վատ»:  
(ԾԽԹԱ. Խ. Ա. Յ. Վ. Ե. Վ.)

Հյուսիսային Կովկասում, 1932 թվին, շնորհիվ վատթար,  
հանցագոր վորակի հողամշակման, բերքը պակասեց: Դեռ  
ավելին. կուլակային պոչերը կարողացան մեծ մասաներ  
առաջ բերել բերքահավաքման ժամանակ և կազմակերպել  
սարուսած՝ արգեն հավաքված բերքից պետությանը հանձ-  
նելու գեմ: Հացը հափշտակում եցին, ծախծինում, թագցնում  
եցին հորերում և այլ կուլակային գաղտնի տեղերում: Մեռ-  
նող դասակարգային թշնամու բոլոր ուժերն ուժեղված  
եցին գելի հացամթերումների պլանի վիճեցումը: Դասա-  
կարգային թշնամին շատ լավ և հասկանում, վոր վիճեցնե-  
րով հացամթերումները, նա գրանով մաս և հացնում տո-  
ցիալիստական շինարարության:

Մի շարք ռայոններում և կոլտնտեսություններում, կուլտակային յելութեներին ակտիվորեն ողումնելին առանձին «կոռմունիստներ», փորոնք անցան հականեղափոխության կողմը։ «Քրաքաններում կուստում ունեցող այդպիսի թշնամիներն ամենալուանգավոր թշնամիներն են»։

Անցած 1932 թվականի փորձը ցուցյալ տվեց, վոր այնող, վորտեղ կոլտնտեսությունների գլուխն եյլն կանգնած իսկական բոլշևիկները, վորոնք հովատարիմ են կուսակցության գործին, այնող ջախջախվեց կուլակային սարտածը, կատարվեցին պետության հանդեպ վերցված պարտավորությունները, իրենք, կոլտնտեսություններն ամրապնդվեցին թե քաղաքականապես, թե կազմակերպչութեն և թե տնտեսապես։

Եեվ ընդհակառակն, այնող, դուք կոլտնտեսությունների գլուխ եյլնիկանքնած կամ ուղակի դասակարգային թշնամիները և կամ «կուստում ունեցող պյառապաները», այնող կուլակային թափթփուկները կարողացան կազմակերպել հացամթերումների և ցանքի սաբուտաժ, վիճեցնել կոլտնտեսության ճիշտ կազմակերպումը։

Այս կոլտնտեսություններում բրիգադները, գործավարձն ու հաշվառքը կազմակերպվեցին կուլակային ցուցմունքներով։

Ուժերի վասարարական դասավորումով, գործավարձն ու հաշվառքն անցկացնելիս կուլակային խեղաթյուրութեամեր մտցնելով, աշխատանքի դիսցիլինան քայքայելով, դասակարգային թշնամին կարողացավ այնպես անել, վոր վարն ու ցանքը վատ յեղան, բերքահավաքման ժամանակ կորուստներ թույլ տրվեցին, մի շարք կոլտնտեսություններ ըշկատարեցին պետության հանգեց ստանձնած պարտավորությունները։ Մյուս կողմից այն կոլտնտեսությունները, վորոնք ճիշտ կազմակերպեցին աշխատանքը, ճիշտ բոլեվիկորեն կազմակերպեցին գործավարձն ու հաշվառքը, պայքարեցին աշխատանքի դիսցիլինայի համար, — հաջողությամբ ավարտեցին հացամթերումները և ջախջախելով կու-

լակային սարուտաժը, պատրաստվում են յերկրորդ հնգամյակի առաջին բոլեկիլյան գարնան։

Անա թե ինչու հենց այժմ, գարնանացանի նախորյակին, առանձնապես կարևոր և հաշվի առնել բոլոր նվաճումներն ու թերություններն աշխատանքի կազմակերպման բնագավուում, այնպես, վոր 1933 թվականին բարելավել աշխատանքի վորակը, վճռականապես բարձրացնել կոլտնտեսային դաշտերի ըերբը։

Հի (բ) Կենտկոմի իր 33 թ. փետվարի 4-ի պատմական վորոշման մեջ («կոլտնտեսությունների կազմակերպչական-տընտեսական ամրապնդման միջոցառությունների մասին») շեշտեց, վոր՝

«Կոլտնտեսաւրյուններում աջիսատանիքի կազմակերպման կարելուագույն, ողակի դառնա բերգագոր, լավագույն դյուլատնտեսական արտելների փորձին համապատասխան։ Կենտկոմը նպատակահարմար և գտնում կուլտնտեսություններում կազմակերպել բրիգադներ՝ կոլտնտեսականների մըշտական կազմով, այնպես, վոր իրեւ կանոն, այդ բրիգադները բոլոր դյուլատնտեսական աշխատանքները կատարեն ամրող տարվա ընթացքում։ Վորոշ հողամասերում»։

Այս վորոշման կազմակցությամբ, յերկրամասի կոլտնտեսություններում 1932 թվի գարնանացանի կամպանիայի նախորյակին մեծ աշխատանք կատարվեց բրիգադ-բանկերը մշտական, արտադրական բրիգադների վերածելու համար։

Սակայն չնայելով դրան, չյուսիսային կովկասի շատ կոլտնտեսություններում գեռես կան բրիգադ-բանկեր։ Մեր յերկրամասում բրիգադ-բանկերի գոյությունը կարելի յերացատրել նրանով, վոր այդ կոլտնտեսություններում կենտկոմի վորոշումը հրապարակելուց հետո, մշտական արտադրական բրիգադ կազմակերպելու աշխատանքը չափարտվեց։ Կուլակային պոչերը, վորոնք առանձին կոլտնտեսություններում սողոսկել եյին զեկավարության մեջ, մարդկանց և արտադրության միջոցները քշում եյին մի տեղից մի այլ տեղ, ստեղծելով դիմացրկություն, անպատասխանատվու-

թյուն, պայմեցնելով կոլտնտեսության կազմակերպչական դորեկությունը:

Դասակարգային թշնամին շատ լավ և հասկանում այն հսկայական նշանակությունը, վոր ունի արտադրական քրիզադը կոլտնտեսության կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործում և ահա թե ինչու նա ամեն կերպ փորձում և վիժեցնել այդ բրիգադի աշխատանքը, կազմա-լուծել նրան, բրիգադիրներ նշանակել իր գործակիցներից:

Այս պատճառով արտադրական բրիգադի ճիշտ կազմա-կերպման համար մզվող պայքարում անհրաժեշտ և ուժե-ղացնել դասակարգային արթնությունը, վճռականապես և անխնայորեն պայքարելով դասակարգային թշնամու փոր-ձերի գեմ, վորոնց նպատակն ե կազմալուծել կոլտնտեսային բրիգադը:

Կոլտնտեսության մեջ ճիշտ կազմակերպելով արտադ-րական բրիգադը, գործը բոլցեմբորեն դեկավարելով, պայ-քարելով դասակարգային թշնամու հականեղափոխական վասարարության գեմ, կարելի կինի բարձրացնել կոլտն-տեսային դաշտերի բերքը: Իսկ բրիգադը ճիշտ կազմակեր-պելու համար պետք ե վերացնել դիմադրկությունը արտադ-րության միջոցների և նողամասերի վերաբերմաբ, վերջ-նականորեն վոչչացնել կուլակային հավասարանքը աշխա-տանքի հաշվառման և յեկամաների բաշխման գործում, կազմակերպել գործավարձը, նյութապես շահագրգուելով կոլ-տնտեսականին, նրա յեկամուտն ուղղակի կախման մեջ դնելով կատարված աշխատանքի քանակից և վորակից: Անհրաժեշտ ե լայնորեն ծավալել աշխատանքի սոցիալիս-տական ձևերը—սոցմբումն ու հարվածայնությունը, բարձրացնել աշխատանքի դիմադրկինան, անհաշտ պայքար մեջ կուլակային գործակալների—կորդիչների, ծույլերի, համայնական աշխատանքի հաշվին ապրել սիրողների գեմ:

Այժմ, թեակոխելով յերկրորդ հնգամյակի առաջին տա-րին, անհրաժեշտ ե նորից և նորից առուպել յուրաքանչ-

յուր կոլտնտեսության մեջ, թե արդյոք բնաշպես եր կազմա-կերպված արտադրական բրիգադը, բնչն եր խանդարում բրիգադի, իրը արտադրական միավորի աշխատանքին, բնչ-պես պիտի վերակառուցվել, բնչ սխալներ ու թերություն-ներ են յեղել թե հենց բրիգադների կառուցման և թե նրանց աշխատանքի մեջ, վորչափ և բրիգադը մաքրվել վնասարարական, կուլակային տարրերից:

Անհրաժեշտ ե նորից ու նորից հարց գնել կոլտնտեսու-թյան մեջ մշտական բրիգադի ամրապնդան մասին: Իսկ մի շարք կոլտնտեսություններում բրիգադները նորից պետք ե կազմակերպել: Բրիգադի վերակառուցման և ամրա-պնդման աշխատանքը պետք ե կատարվի վորքան կարելի յե շուտ, քանի վոր նայած թե վորչափ ճիշտ կերպմակերպվել բրի-գադը, ճենց դրանից ել կախված կլինեն վոչ միայն դար-նացանի կատարումը, այլ և նրա նախապատրաստման միջոցառումները (մերմահավաք, քարշող ույժի նախապատ-րաստություն, ինվենտարի վերանորոգություն և այլն):

Այս հարցերը գործնականորեն լուծելու համար, պետք ե ուսումնասիրել անցյալ տարվա արտադրական բրիգադների աշխատանքի փորձը և առաջավոր բրիգադների լավագույն փորձերի հիման վրա բարելավել մյուս բրիգադների աշխա-տանքը:

Հարկավոր ե բոլցեմբայան յեղակացություններ հանել կուլակության կազմակերպած հականեղափոխական սարո-տաժից, աշխատանքի կազմակերպման հարցերում կուլակա-յին թափթփուկների վասարարությունից, վորն ունեցել և ամենաբաղման ձևեր, սկսած աշխատանքի հաշվառքուա վասարարությունից և խեղաթյուրումներից գործավարձը մեծ խմբերով կատարվող աշխատանքի վերածելուց, կոլտըն-տեսականներին ավանդներ տալիս և յեկամուտները բաշխե-լիս՝ կուլակային հավասարանքից մինչև աշխատանքային դիմացինայի քայլայումը, աշխատանքի վերակն իշեցնե-լու աղիտացիան, հացամթերումների վիժումը, կոլտնտեսա-յին գույքի հափշտակումը:

Վորպեսղի գործնականորեն, կենդանի որինակների հիման վրա գիտել թե ինչպես են կազմակերպված և ինչպես են աշխատում կոլտնտեսային բրիգադները, ինչ նվաճումներ և անկանոնություններ կան նրանց աշխատանքում, ինչ պատճառներ և մեզ համար անցանկալի յերևոյթներ կան կոլտնտեսային աշխատանքում և ինչպես դրանք վերացնել, մենք վերցրինք յերեք բրիգադ, վորոնք մտնում են 250-ի մեջ, վորոնք մրցում են իրար հետ Հյուսիսային Կովկասում.—Ստալինի 6 պայմանների անվան՝ Հովհաննեայանի բրիգադը, Մողդոկի ոայոնի «Ռւկրաինեց» կոլտնտեսության՝ Միջնակոյի բրիգադը և Վորոնցով-Ալեքսանդրովսկի այցոնի՝ Կարմի բանակի անվան կոլտնտեսության բրիգադի Սիտնիկի բրիգադը:

## ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախքան այն հարցին անցնելը, թե ինչպես են կազմակերպված այդ բրիգադները, մենք համառոտ կպատմննք այն կոլտնտեսությունների մասին, վորտեղ գտնվում են նրանք, քանի վոր կոլտնտեսության արտադրական միավոր հանդիսացող բրիգադը անկարելի յերեւական ամբողջ արտադրությունից կտրված մի միավոր:

Բնկ. Ստալինի 6 պայմանների անվան և Մողդոկի ոայոնի «Ռւկրաինեց» կոլտնտեսությունները բամբակագործական-հացանատիկային տնտեսություններ են. անառնաբուծությունը և մյուս, յերկրողական ճյուղերն այստեղ շատ թույլ են զարգացած:

Վորոնցով-Ալեքսանդրովսկի ոայոնի՝ Կարմիր բանակի անվան կոլտնտեսությունը, թեպես և ունի բամբակի ցանքեր, սակայն հացանատիկային տնտեսությունն այստեղ զերակշռում եւ: Համայնացված անառնաբուծություն (ապրանքային ֆերմաներ) նա չունի: Յերկրողական ճյուղերը (այդերուծություն, բանջարաբուծություն) այստեղ թույլ են զարգացած:

Բնկ. Ստալինի անվան և Կարմիր բանակի անվան կոլտնտեսությունները 1932 թվի սկզբին առանձնացված են խոշոր կոլտնտեսություններից: Բոլոր յերեք կոլտնտեսություններն սպասարկվում են մեքենա-տրակտորային կայաններով: Բնկ. Ստալինի անվան կոլտնտեսության (վորի մեջ մտնում եւ մեր հիշած բրիգադներից մեկը—Հովհաննեայանի բրիգադը) արտադրական-ֆինանսական պլանում նախատեսվել եր կազմակերպել 7 դաշտագործական բրիգադներ (բամբակագործական-հացանատիկային), 1—տրանսպորտային, 1—բանջարաբուծական, 1—խաղողաբուծական, 1-ն ել կաթնա-ապրանքային ֆերմային սպասարկելու համար: Սա ույժերի բավականին ճիշտ գասավորում եւ և ըստ մասնաճյուղային—արտադրական նշանների՝ մշտական բրիգադներ կազմակերպելը, վոր կոլտնտեսությունն սկսել եր արտադրական-ֆինանսական պլան կազմելիս, խսկապես նշի իրագործվել 1932 թվականին կոլտնտեսությունն ուներ վոչ թե մշտական-արտադրական բրիգադներ, այլ բրիգադ-բանկեր, սրանց բոլոր սպակասություններով և հիվանդություններով (տես աղյուսակ № 1-ին): Ինչպես յերևում եւ աղյուսակից, կազմակերպվել եյին 7 բրիգադ-բակեր, վորոնք գյուղում գետեղված եյին տերը բարիտորիալ սկզբունքով, խսկ բրիգադներում աշխատունակների թիվը տատանվում եր 44-ի և 113-ի միջև: Կազմակերպված յոթը բրիգադներից, կոլտնտեսությունը ճյուղերի (բանջարանոց, խաղողաբուծարան, արհեստանոցներ, կաթնա-ապրանքային ֆերմա) վարչեների տրամադրության տակ գրեց անհրաժեշտ թվով աշխատունակներ:

Հետևանքն այն յեղափ, վոր դաշտային աշխատանքներին մասնակցողների քանակությունը բրիգադներում պահանջել 69—43 մարդ:

Կոլտնտեսությունը բրիգադների վրա բաժանում եւ վոչ միայն աշխատունակներին, այլ և տնտեսություններն ու շնչերին, դրանով վերջնականապես խախտելով բրիգադի բրտագրական բնույթը:

ԵՎԿ. ՍՏԱԼԻՆԻ 6 ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ  
ԿԱԶՄԸ ՎԵՐԱԿԱԶՄԵԼՈՒՑ ՀԵՏՈ 864 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԽԵՐԸ

Ա ն ո ւ ն ե ր	Բ ը ի գ ա դ ն ե ր							
	1	2	3	4	5	6	7	Ընդառ.
Տնտեսությունների թիվ.	40	40	49	71	54	64	25	273
» շնչերի »	143	178	213	287	239	261	59	1380
Ընդունենք աշխատունակ	66	69	79	113	84	86	44	541
Նրանցից բրիգադից գուրս մշական աշխատում են	7	7	23	41	19	30	1	128
Քարշող ույժ . . . .	59	49	57	68	44	60	35	370
Դարձնանացան հեկտարով	288	324	—	389	353	289	209	—
Քաղաքի բնակածութեան բամբակացանի առաջա- զրություն . . . .	4,8	7	5,7	8	4,8	6	—	—
Բամբակացանի ընթաց- քում 1 աշխատունակի բնակածությունը հեկ- տարով . . . . .	137	132	174	174	160	150	42	—
	2,3	2,1	3,2	2,5	2,5	2,4	1	—

Վորպեսզի բոլորովին պարզ հասկանալ թե վորքան սխալ եր կազմակերպել կոլտնտեսությունն իր բրիգադները, բերքենք հետեւյալ բնույթը որինակը. —ընկ. Ստալինի 6 պայմանների անվան կոլտնտեսության 3-րդ բրիգադը, լինելով դաշտագործական բրիգադ, գարնանացանի առաջադրությունները ստացել: Նրան՝ փոխադրական կարիքների համար ամրացվել ելին քարշող ույժի 57 միավոր և 79 կոլտնտեսական—44 տղամարդ, 25 կին և 10 անչափահաս: Յերրորդ բրիգադը անվանելով «տրանսպորտային», կոլտնտեսության վարչությունը քաղնանի շրջանում նրան ամրացնում է 174 հեկտար բամբակի, քանի վոր հակառակ զեպքում բրիգադի կոլտնտեսականների մի մասը, մասնավանդ կանայք և անչափահանները, կմնային առանց աշխատանքի:

Հետաքըքիր և նաև հետեւյալ փաստը. յերկու կոլտնտեսական, մեկ ու կես տարի բացակայելուց հետո, վերադարձ-

ձան կոլտնտեսություն: 5-րդ բրիգադի բրիգադիրն իմանալով այդ մասին, կոկույն և յեթ նրանց ուղարկեց իր բրիգադին աշխատանքի, իր մտքովն անգամ չանցկացնելով, վոր նրանց կարելի յե ոգտագործել ուրիշ բրիգադներում և ճյուղերում, քանի վոր երակ ապրում են իր բրիգադում:

Մեր նկարագրած Հովհաննեսյանի 5-րդ բրիգադն ունի 84 աշխատունակ կոլտնտեսական, վորոնցից 44-ը տղամարդ, 32-ը կին և 8-ն անչափահաս: Այս թվում բրիգադում բոլորովին չեն աշխատում, թեպետ նրա կազմի մեջ են մտնում 20 մարդ. —7-ը բանջարանցում, 1-ը մթերող, 1-ը անասնաբուժական սանիտար, 2 նամակատար, 1-ը կաթնա-ապրանքային ֆերմայում, 1-ը դարբին, 3-ը շինարարության վրա յեն աշխատում և այլն: Այսպիսով այս կոլտնտեսականներն սպասարկում են վոչ միայն համակոլտնտեսային կարիքները (քարտուղար, նամակատար, դարբին), այլ և կատարում են առանձին մասնաճյուղերի աշխատանքներ, վորտեղ բատ կանոնի պետք և լինեն ինքնուրույն, մասնաճյուղային արտադրական բրիգադներ (բանջարանոց, կաթնա-ապրանքային ֆերմա և այլն):

№ 1-ին աղյուսակում ցուց և տրված կոլտնտեսության ցանքասատարածությունների բաշխումը բրիգադների միջև, բամբակացանի բաշխումը, մեկ աշխատունակի և քարշող ույժի միավորի բեռնվածությունը գարնանացանի և առանձնապես բամբակացանի ժամանակ: Ինչպես յերեւմ ե, զովհաննեսյանի № 5 բրիգադում քարշող ույժի միավորի բեռնվածությունը գարնանացանի ժամանակ 8 հեկտար ե, իսկ առաջին բրիգադում միայն 4,8 հեկտար և այլն: Բամբակացանի ժամանակ մեկ աշխատունակի բեռնվածությունը 5-րդ բրիգադում կազմում է 2,5 հեկտար, միենույն ժամանակ 7-րդ բրիգադն ունի միայն 1 հեկտար, 2-րդ բրիգադը 2,1 հեկտ. և այլն:

Արտադրական առաջարության և աշխատանքի լարվածության միջև այդ անհամապատասխանությունը բացարկում է բրիգադների սխալ և մեքենայարար կառուցված-

քով, ուրեմն և աշխատողների ու արտադրության միջոցների սխալ բաշխումով։ Այս բոլորի շնորհիվ, բրիգադների մի ժամը չափից գուրս եր ծանրաբեռնվում պլանի կատարման աշխատանքներով, մի մասն ել քիչ եր ծանրաբեռնվում։

Այժմ տեսնենք, թե ինչ կարդով են կազմակերպվել Միշենկոյի և Սիտնիկի բրիգադները։

Մշտական արտադրական բրիգադի կազմակերպման հիմնական հարցերից մեկն այն է, թե ինչպես ե բրիգադը լուսավում բանվորական ույժով, վորը պիտի համարվածախան լինի պլանային առաջադրության և թե ինչպես են բաժանվում կոլտնտեսականները բրիգադների վրա։

Իրենց արտադրական պլանի և աշխատանքի ծավալի հիման վրա, «Ուկրաինեց» և Կարմիր բանակի անվան կոլտնտեսությունները վորոշել են առանձին մասնաճյուղերում պահանջվող բանվորական ույժի անհրաժեշտ քանակությունը։

Բանջարանոցի, կաթնա-ապրանքային ֆերմայի սպառկման և տնտեսական աշխատանքների համար (արեւտանոցներ) նշանակվեց կոլտնտեսականների մի մասը, հաշվի առնելով առանձին կոլտնտեսականների անհրաժեշտ վորակավորումն ու մասնավիճությունը և տվյալ աշխատանքի համար վարժված լինելու հաշտագործության մեջ աշխատելու համար, —վորը հանդիսանում ե տնտեսության հիմնական ճյուղը, նշանակեցին ամենավորձված, դաշտագործությունը գիտեցող կոլտնտեսականներին։ Վերջիններս բաժանվեցին բրիգադների վրա, յուրաքանչյուր առանձին բրիգադի արտադրական առաջադրություններին համապատասխան, իսկ «տնտեսության» և «շնչերի» մտախն խոսք ել չկար։ Դաշտագործական բրիգադներում կոլտնտեսականների մշտական կազմը վորոշվեց՝ ըստ նրանց այն քանակության, վորը հավասարաչափ ողբագործվում է ամբողջ գյուղատնտեսական տարվա աշխատանքների ընթացքում։ Այսպիսով «Ուկրաինեց» կոլտնտեսության մեջ կազմակերպվեց 6 բրիգադ, վորոնցից 2-ը դաշտագործական, իսկ Կարմիր բանա-

կի անվան կոլտնտեսության մեջ—7 բրիգադ, վորոնցից 4-ը դաշտագործական։ Առաջին կոլտնտեսության դաշտագործական բրիգադի մշտական կազմը վորոշվեց 85 մարդ (աշխատունակ), իսկ յերկրորդ կոլտնտեսության նույնպիսի բրիգադի կազմը—65 մարդ։

Արագորական սկզբունքով դաշտագործական բրիգադներ կազմելիս, կոլտնտեսությունը հաշվի առավ կոլտնտեսականների ապրելու տեղը, նրա համար, վորպիսդի ապահովվի մշտական կազմը կոլտնտեսականների միջև և հեշտանա բրիգադի ղեկավարությունը բրիգադիրի կողմից։ Յերկու կոլտնտեսություններում արտագրության պայմանները (հոգամասերի դիրքը, հողի բնույթը, մեքենայացման աստիճանը, կուլտուրաների տեսակները և այլն) թույլ ավին արտադրական առաջադրությունը բրիգադների միջև, շատ թեքից, հավասարակի բաշխել։

Բրիգադներում մշակվելիք կուլտուրաները խստորեն հաշվի ենին առնվում՝ ըստ նրանց պահանջած աշխատանքի քանակության։ որինակ, առաջին բրիգադը պիտի մշակեր 300 հեկտար աշնանացան, 150 հեկ. բամբակ, 300 հեկ. վարսակ, 2-ը՝ բրիգադը—300 հեկտար աշնանացան, 100 հեկտար բամբակ, 50 հեկ. յեղիպտացորեն, 200 հեկ. վարսակ և 100 հեկ. վարսակ և այլն։

«Ուկրաինեց» կոլտնտեսության մեջ Միշենկոյի բրիգադին տրվեց 800 հեկտար ցանքսատարածություն, իսկ մյուս բրիգադին—775 հեկտար։ Կարմիր բանակի անվան կոլտնտեսության մեջ ցանքսատարածությունների միջև տարբերությունը 50 հեկտարից ավելի չեր։ Այդ տարբերությունները բացառապես կախումն ունեցին հողերի դիրքեց, ուստի և նպատակահարմար չեր 30—50 հեկտար հողի տարբերությունից խուսափել և բրիգադին առանձին հողամաս հատկացնել բրիգադի հիմնական հողամասից։ Կիրովեր հեռու։ Բանվորական ույժը, քարշող ույժը և գյուղատնտեսական ինվենտարը բրիգադների միջև բաշխվեցին արտադրական առաջադրության միանդամայն համապատասխան։

Աշխատում եցին այնպես անել, վոր բրիդաղների հողամաս-  
սերը հնարավորին չափ մի տեղում լինեն:

Արգյոք այստեղ կարող եր անհամապատասխանություն  
մինել արտադրության միջոցների և կոլտնտեսության ընդ-  
հանուր պլանի հիմանը՝ վրա տրված արտադրական առաջա-  
դրության միջև։ Իհարկե վոչ Յեթե Հովհաննեայանն իր  
բրիգադ-բակում ուներ վոչ միայն աշխատունակներ, այլ և  
«տնտեսություններ» և «շնչեր», ապա Սիտնիկովի և Միշ-  
չենկոյի բրիգադները բաղկացած են բացառապես այն աշ-  
խատունակներից, վորոնք ամրացված են նրանց՝ արտադր-  
րական առաջադրությունը կատարելու համար։ Բրիգադները  
կազմակերպելիս, մի անգամից նրանք վեցըրին վոչ թե գյու-  
ղի ստանիցայի մի վորոշ մասի վարչական ղեկավարման  
դեր, այլ անցան արտադրական գործունեության՝ պլանային  
առաջադրությունը կատարելու համար։

Յեթե Հովհաննեայանի բրիգադ-բակն իրենից ներկայաց-  
նում ե գյուղում մի քանի տների խումբ, ապա Սիտնիկի և  
Միշենկոյի բրիգադները հանդիսանում են արտադրական  
միավորներ, վորոնք ունեն պլանային առաջադրություն,  
իսկ վերջինիս կատարման համար—կոլտնտեսականների  
վորոշ, մշտական կազմ և ամբողջ տարվա համար ամրաց-  
ված քարշող ույժ և գյուղատնտեսական ինվենտար։

Ընկ. Ստալինի 6 պայմանների անվան՝ Հովհաննեայանի  
բրիգադ-բակը արդյունք ե ինքնահոսի և գասակարգային  
թշնամու քայքայիչ աշխատանքի, կուսակցության դիրեկ-  
տիվները ուղղակի կերպով սարոտածի յենթարկելու։ Ընկ.  
Ստալինի 6 պայմանների անվան կոլտնտեսության ղեկա-  
վարությունը անցավ դասակարգային թշնամու կողմը, վո-  
րէ հետևանքով կոլտնտեսությունն ունեցավ մի ամբողջ  
շարք ճեղքվածքներ, վորոնց մասին կիսունք ստորև։

Ընդհակառակը, Սիտնիկի և Միշենկոյի բրիգադը չոր-  
հիվ նրանց ճիշտ կազմակերպման ու ղեկավարության,  
միանգամայն ուղղի կատարեցին կուսակցության վորոշում-  
ները։ Այդ բրիգադների մնանությունը վորոշվել է վոչ թե

մեքենայաբար, այլ աշխատանքի արտադրական պայման-  
ների և պետության պլանային առաջադրությունը սահ-  
մանված ժամկետերում կատարելու հաշվառմամբ։

## ՊԱՅՔԱՐ ԴԻՄԱՁՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հենց արտադրական, մշտական բրիգադների կազմա-  
կերպումն անհրաժեշտ և գարձնում նրան ամրացնել հողա-  
մաս, քարշող ույժ, զյուղատնտեսական ինվենտար, այն-  
պես, վոր «իրեկ կանոն, այդպիսի բրիգադները բոլոր հիմ-  
նական գյուղատնտեսական աշխատանքները կատարեն ամ-  
բողջ տարվա ընթացքում, վորոշ հողամասի վրա։ ՀԿ(բ)Կ  
կենտկոմի 1932 թվի փետրվարի 4-ի վորոշումից։

Կանդ առնենք Հովհաննեայանի բրիգադի հողամասի վրա  
(տես № 2 և 3 աղյուսակներ): Ինչպես յերելում ե աղյուսակից, իսկական դիմապրկությունը ցանքսերի վերաբերմամբ գոյություն ունի վոչ միայն Հովհաննեայանի բրի-  
գադում, այլ և ամբողջ կոլտնտեսության մեջ։ Տարվա ընթացքում Հովհաննեայանի բրիգադում յերեք անգամ փոխվել ե հողամասի տարածությունը, փոխվել ե նրանց ստորաբաժնումները և մշակվելիք կուլտուրաները։ Հողամասը, ինչպես այդ յերելում ե № 4 սքեմայից, ցրված են  
կոլտնտեսության ամբողջ հողատարածության վրա։ № 5  
բրիգադը առաջադրություն եր ստացել ցանել 138 հեկտար  
բամբակ, բայց ցանեց 213 հեկտար, իսկ բերքահավաքման  
ու քաղհանի համար նրան ամրացվել եր 150 հեկտար։  
Հետեւվանքն այն յեղավակ վոր բրիգադի ցանած 63 հեկտար  
բամբակը դիմապրկության մատնից։ Ըստ պլանի,  
բրիգադը մոգարի ցանք չպիտի կատարեր և չկատարեց,  
սակայն բերքահավաքման համար նրան ամրացվեց 185  
հեկտար մոգար։ Բրիգադը պիտի ցաներ 174 հեկտար վար-  
սակ, բայց ցանեց 225 հեկտար։ Հարց ե ծագում։ Ընչն ե  
այդպիսի դիմապրկության պատճառը։ Անպայման այն, վոր  
հողամասերի և մշակվող կուլտուրաների հանդեպ դիմապր-

կությունը նախ և առաջ հետեւանք եր բրիգադի սխալ կազմակերպման, աշխատանքի պլանայնության, բացակայության, բրիգադներին չելին ամրացվել հողամասեր, իսկ նրա աշխատող ձեռները և արտադրության միջոցները շարունակ փոխվում եյին:

Գարնանացմանի հենց առաջին որից կոլտնտեսականների ամրացումը քարշող ուժին և զյուղատնտեսական ինչնտարին՝ խախտվեց, ձևվական բնույթ ստացավ, միայն թղթի վրա դոյություն ունեցավ: Անա մի բնորոշ որինակ՝ 10 կոլտնտեսականներից բաղկացած մի խումբ ապրիլի 10-ից մինչև 22-ը վարում եր հողը բամբակ ցանելու համար: Այդ ժամանակվա ընթացքում բանվորական որերի թիվն ընդամենը 10-ն եր: Խմբակն ուներ 7 գութան և 28 ձի, վորոնք ամբողջ ժամանակ աշխատում եյին ավագալ հողամասում: 10-ը բանվորական որից 7 որ աշխատում եյին բոլոր յոթը գութանները, մի որ աշխատեց 6 գութան և 2 որ 2 գութան: Հարվածային կոլտնտեսականներ Կ. Ա. Յեպանովը և ի. Ս. Մտեփանովը աշխատեցին 10 որ, կոլտնտեսական Յատուցովը՝ 8 որ, կոլտնտեսական Ալավերդովը, Ապրեյանը, Ավագյանը, Դական որ, կոլտնտեսական Միքանովը՝ 5 որ, Ավետիքյանը՝ 3 որ, Յե. Ա. Միքանովը և ի. Ա. Յեպանովը՝ 1-ական որ: 10 որից ընթացքում 3 գութանի վրա աշխատեցին 6 կոլտնտեսական: Անա բրիգադի ներսում դիմազրկության ցայտուն որինակը, վորի պատճառը տվյալ զեպքում կոլտնտեսականների ձեվական ամրացումն եր արտադրության միջոցներին, բացակայում եր կոլտնտեսականի պատասխանատվությունը նրան հանձնած հասարակական գույքի դրության համար: Արտազը թիջոցների հանդեպ դիմազրկությունը հնարավորություն տվեց ծույլին և դորձալքողին՝ չզնալ աշխատանքի: Հետեւ վանքն այն յեղավ, վոր 121 հեկտարից 104-ը վատ ցանվեց. Դասակարգային թշնամու ձեռքում դիմազրկությունը մի զենք եւ կոլտնտեսության ներսում քայքայիչ աշխատանք կատարելու համար: Մեքենաների ջարդվածք, քար-

շաղ ույժի քայքայում՝ շնորհիվ նրա գիշակեր ոգտագործման, գործալքումներ, անպատճանատվություն—ահա դիմազրկության արդյունքները:

Արտազգական բրիգադ կազմակերպելու վերաբերմամբ կուսակցության ու կառավարության գիրեկտիվների կոպիտախտման հետեւանքը յեղավ դիմազրկությունը, կոլտնտեսականների անպատճանատվությունը աշխատանքի հանդեպ, այստեղից ել—մի շարք արտազրական հեղքվածքներ, կուլակության հականեղափոխական քայքայիչ աշխատանքի ուժեղացումը:

Գյուղատնտեսական ինվենտարն ու լծկանն ամրացված Տեն բրիգադին, սակայն նրանում բաշխվել և ցուցակով բառ ։ Ժոնվել են միայն ձիերն ու գութանները: Մնացած գյուղատնտեսական ինվենտարը գտնվում եր: Բրիգադիրի տրամադրության տակ: Յեղել է գեպք, յերը 2 ցանիչ տարվել Են ուրիշ բրիգադներ և տվյալ ժամանակում հայտնի չեն թիվ Փարտեղ են գտնվում: Յեթե այդ ցանիչներին ամրացված Մինեյին կոլտնտեսականներ, նրանք անպայման լավ կդիմանային, թե վրտեղ են ցանիչները, վորոնց համար նըրանք պատասխանատու յեն կոլտնտեսության առջև:

Լորոգրեյկաններն սկսեցին կոլտնտեսականներին ամրացնել միայն ժամանակ, յերբ արգեն սկսվել եր բերքահավաքման կամպանիան, այն ել այդ ամրացումը կատարվել եր վոչ մինչև հնձի վերջը: Յեվ, վորովհետեւ կոլտնտեսականը չզիտեր, թե նա վազն ինչ լորոգրեյկայով և աշխատանքի գնալու, այդ պատճառով ել հենց առաջին որը 6 լորոգրեյկաններից յերեքը ջարդվեցին ու գուրս յեկան շարքերից:

Միտնիկի և Միշենկոյի բրիգադներին հաստատապես ամրացված են ցանքերի հողամասեր, վորոնք մեծ մասսամբ մի տեղում են գտնվում: Բրիգադի կատարած ցանքերը մըշակվում եյին և նրանց բերքը հավաքվում եր նույն բրիգադի ուժերով: Բրիգադները վիսկելու կամունքները հողամասերը, գիտեյին, վոր բացի իրենքի, այդ հողամասերը վոչ

ՅԱՀԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿ. ՍԱՄԼԻՒ ՎԵՅ ՊԱՅՄԱՆԵՐԻ ԱՎԱՄ ԿՈԼՏՏՏԵՍՄՈՒԹՅԱՆ  
ԲԻԺԱՆԵՐԻ ՄՐՑԵՎ

## Աղյուսակ № 2

ՅԱԼԵՔՆԵՐԸ ԸՆ ԿՈԼՏՏԵՆԵՐԻ ԲԱՇԽՈՒԾ ԸԿ. ՍԱՄԼԻՒ ՎԵՅ ՊԱՅՄԱՆԵՐԻ ԱՎԱՄ ԿՈԼՏՏՏԵՍՄՈՒԹՅԱՆ  
ԲԻՋԱՆԵՐԻ ՄՐՑԵՎ

ԲՐԻԳԱԴՆԵՐ	Բ ա մ բ ա կ		Մ ա գ ա ր		Ղ ա բ ս ս ս կ	
	Հաստ պլ- լանի	Ճանապարհ վաճառքի	Հաստ պլ- լանի	Ճանա- պարհ	Հաստ պլ- լանի	Ճանա- պարհ
1-ԻՆ ԲՐԻԳԱԴ	—	86	137	194	57	—
2-ԻԴ	—	—	132	220	56	—
3-ԻԴ	—	80	174	—	46	—
4-ԻԴ	146	38	174	—	—	107
5-ԻԴ	—	213	160	—	185	175
6-ԻԴ	—	133	229	150	—	185
7-ԻԴ	—	—	42	139	202	42
ՀՆԱԳԱՎԱՆ	883	970	969	553	614	514
					505	938
						938

Տիյալ ժամանակ Կաշընութ	Բ ա մ բ ա կ						
	1	2	3	4	5	6	7
Հատ պլանի . . .	276	314	—	389	353	289	209
Բրիգադը ցա- նել է . . .	243	507	108	562	438	390	410
Բերքահավաքման համար ամբաց- գած է . . .	187	438	438	—	657	643	306

վոք չի մշակելու, վոր նրանց հողամասի բերքի համեմատ  
պիտի գնահատվի նրանց աշխատանքը ամբողջ գյուղատն-  
տեսական տարում, ուստի ամբողջ բրիգադը, նրա բրիգա-  
գին ու կոլտնտեսականները շահագրգոված եյին նրանով,  
վոր ամենալավ կերպով և իր ժամանակին կատարվեն պը-  
լանով նախատեսնված աշխատանքները, ամենալարձր բերք  
ստացվի կոլտնտեսության համար, մինչույն ժամանակ և  
բարձրացվի իրենց աշխատանքի գնահատութիւն աշխորենով:  
Քարշող ույժը և գյուղատնտեսական ինվենտարը Սիրոնիկի և  
Միջնկոյի բրիգադներին ամբացվել են հաստատորեն և  
բրիգադի ներսում բաշխվել-ամբացվել են առանձին կոլ-  
տնտեսականներին: Մեկ կոլտնտեսականին ամբացված և  
2 ձի, գութան, տափան, ցանիչ, լորոգրեյկա, սայլ և կու-  
տիվատոր:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր այդ բրիգադներուն  
ամեն ինչ, սկսած հողամասից մինչև գութանը բաշխվել և  
ամբացվել և բրիգադին ու կոլտնտեսականներին, վորոնք  
պատասխանատու յեն հասարակական գույքի պահպանու-  
թյան համար:

Բրիգադի պլանը և աշխատանքի ճիշտ կազմակերպումը  
հանդիսանում են այն հիմքը, վորի վրա զարգանում և ամ-  
բացնդվում և կուեկտիվ տնտեսությունը:

Միանգամայն հասկանալի յեւ, վոր կուլակը և նրա ոպղորունիստական գործակալությունը հանդիսանում են սոցիխալիստական տնտեսության ճշգրիտ ու կանոնավոր պլանափորման ամենակատաղի թշնամիները: Դասակարգային թշնամին բոլոր ուժերով ու միջոցներով ձգտում եւ վիճեցնել կոլտնտեսային արտադրության պլանային հիմունքը: Դասակարգային թշնամին հաստատվելով կոլտնտեսային վարչության մեջ, «պլանային աթուրմայով» վիճեցրեց բրիգադի պարնանացանի աշխատանքը, կազմալուծեց նրա գործունեյությունը:

Հովհաննեսյանի բրիգադը ցանքի կամպանիայի ընթացքում ստացավ չորս զանազան արտադրական առաջադրություններ և չղեկավարվեց նրանցից վոչ մեկով:

Կոլտնտեսականները չեյին քննում պլանը: Մինչդեռ միայն արտադրական առաջադրությունների շուրջը կատարվող մասսայական լայն աշխատանքով կարելի յեւ և պետք ե ոգտագործվի կոլտնտեսականների արտադրական փորձը, նրանց կոնկրետ գիտելիքները տվյալ կոլտնտեսության գյուղատնտեսական արտադրության պայմանների մասին:

Բացի բրիգադի գարնանացանի պլանի հաճախակի վորփոխությունից, վորն անդրադարձավ նաև կոլտնտեսականներին աշխատանքի համար գասավորելու վրա,—ուժերը վատ գասավորվեցին,—մեծ վնաս հասցրեց նաև Հովհաննեսյանի բրիգադի հոսունությունը: Բացի նրանից, վոր 20 տղամարդ շարունակ աշխատում եյին բրիգադի արտադրությունից դուրս, կոլտնտեսականների առանձին խմբակներ, 3—7 հոգի աշխատում եյին սեղոնով, վարչության կարգադրերի համաձայն, կոլտնտեսության ուրիշ հյուղերում:

Բրիգադում ուժերի գասավորությունը կախված եւ գործակարձը կիրառեց: Դարնանացանի շրջանում բրիգադը վարելու համար բաժանվում եր 3 ողակի, յուրաքանչյուրում 2 գութան: Տափանելու և ցանելու վրա աշխատում եյին 14—16 հոգուց բաղկացած խմբակներ: Բամբակի քող-

հանման խմբակները բաղկացած եյին 15—25 մարդուց, իսկ ուրիշ, ավելի մանր ողակներ գոյություն չունեյին:

Հոգի բրիգադակարման խմբակի մեջ մտնում եր 18 մարդ, դիզաղների խմբակում—14—18 մարդ:

Ինչպես յերևում ե, մեծ խմբակը—դա ույժերի դասավորման հիմնական ձևն ե Հովհաննեսյանի բրիգադում: Այն զեպքերում, յերբ բրիգադի Հովհաննեսյանը կոլտնտեսականներին մանր խմբակների յեր բաժանում, աշխատանքի արտադրողականությունն աճում եր, վորը յերևում է Ն 5 աղյուսակից:

#### Սովորական և աղյուսակ № 4

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻ և 5 ԲՐԻԳԱԴՈՒՄ ԲԱՍԻՆԱԿ ՔԱՂԱՔԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Աղյուսակն, անուն և հայրանուն	Բրական արտադրված և չունիս				
	21	22	23	24	25
1. Գալստյան Գ. Գ. . . . .	0,10	0,10	—	—	—
2. Յեղանով Վ. Վ. . . . .	0,10	—	—	—	—
3. Յատուրով Կ. Յ. . . . .	0,10	0,10	0,8	0,16	0,20
4. Սահմանով Ի. Ա. . . . .	0,10	0,10	—	0,16	0,20
5. Մերանով Մ. Մ. . . . .	0,10	0,10	0,8	—	—
6. Միքանով Յ. Ս. . . . .	0,10	0,10	0,8	—	0,24
7. Միքանով Յա. Ի. . . . .	0,10	—	—	—	—
8. Ավագյան Ա. Ն. . . . .	0,10	0,10	0,8	0,16	0,24
9. Ավագյան Ա. Ա. . . . .	0,10	0,10	0,8	0,16	0,20
10. Ավագյան Կ. Գ. . . . .	0,10	0,10	—	0,16	0,20
11. Միքանով Ա. Զ. . . . .	0,10	—	—	—	—
12. Ազգեսյան Կ. Ս. . . . .	0,10	0,10	—	—	0,10
13. Սաֆարով Ա. Ի. . . . .	0,12	0,20	0,8	—	—
14. Դանիելով Վ. Ա. . . . .	0,12	0,20	—	—	0,10
15. Միքանով Ս. Կ. . . . .	0,12	0,20	0,8	—	0,10
16. Ավագյան Ա. Ի. . . . .	0,12	0,20	0,8	0,16	—
17. Ալավերդով Կ. Մ. . . . .	0,12	0,20	0,8	0,16	0,24
18. Ազգեսյան Մ. Զ. . . . .	0,12	—	0,8	0,16	—
19. Ավագյան Ա. Ի. . . . .	0,12	0,20	0,8	0,16	—
20. Միքանովա Վ. Գ. . . . .	0,12	—	—	—	—
21. Գավրիլովա Ռ. Մ. . . . .	0,12	0,2	0,8	0,16	—
22. Գավրիլովա Տ. Մ. . . . .	0,12	0,2	—	—	—
23. Դանիելով Ա. Ա. . . . .	0,12	0,2	0,8	0,16	—
24. Մակիանովա Ս. Մ. . . . .	0,12	—	0,12	0,16	0,16

Բնակչությունը սպասարկելու համար գործությունը		Միաժամկետ գործությունը		Համարված գործությունը		Համարված գործությունը	
Աղջկեր գործությունը		Աղջկեր գործությունը		Աղջկեր գործությունը		Աղջկեր գործությունը	
Վահագում 2 լուսական գործությունը	...	1,5	2	2,5	1,65	2	2,2
Յանեց որբակ գործությունը	...	1,5	2,5	3,25	—	—	1,5
Յանեց որբակ գործությունը	...	6	—	6	6	7,5	6
Տափահանք	...	6	7	8	—	—	6
Զեռչել քաղցան 1 մարդու	...	0,25	0,25	0,35	0,20	0,27	0,25
Հանճ լորուրի կառակի	...	—	—	5	6	7	5
Հանճ էնջանի կառակի	...	4	4,5	5	—	—	3,5
Դիզել 2 մարդու	...	2	2,25	—	1,5	2	—
Մշտական քահ գործությունը անդադար խորությունը	...	—	—	0,5	1,5	—	—
Հ մ ը թ ը	...	—	—	—	—	—	—

Հիմականը, վոր աչքի յե ընկնում... աղյուսակը դիտելիս, — ու կուլակային հավասարանքն ե, խմբակային գործավարձի պայմաններում արտադրանքը հաշվի առնելու ժամանակ:

Դրա հետ միասին կարելի յե բերել այսպիսի որինակ. յեթե հարվածայիններ ե, Ստեփանովը և ի. Յեպանովը խմբակային գործավարձի դեպքում, ութն որվա ընթացքում մշակում եյին 1,66-ից մինչև 2 հեկտար, ապա աշխատելով յերկուսով, նրանք մշակեցին 3-ական հեկտար: № 5 աղյուսակից (քաղհանի ցուցակ) մինք տեսնում ենք, վոր հունիսի 21-ին կոլտնտեսուհիները բաժանվեցին յերկու խմբակի, յուրաքանչյուրում 12 հոգի, առաջին խմբում յուրաքանչյուր կոլտնտեսուհի մշակեց 0,1 հեկտար, իսկ յերկրորդ խմբում — 0,12 հեկտար: Հունիսի 25-ին աշխատելով մանր խմբակներով, կոլտնտեսուհիները մշակեցին 0,16 հեկտարից մինչև 0,20 հեկտար, 0,24 հեկտար և այլն: Կարգադրի համաձայն որական արտադրույթ սահմանված եր 0,17 հեկտար:

№ 5 աղյուսակը ցույց ե տալիս արտադրույթի նորմաների կատարումը մեր վերցրած բրիգադներում: Պետք ե առել վոր Հովհաննեսյանի բրիգադում արտադրույթի նորմաների կատարումը բոլորովին չեր ներդաշնակվում աշխատանքի վրակի հետ և ըրիգագում ընդհանրապես աշխատանքի վրակը խիստ անբավարար եր: Միանգամայն հասկանալի յե, վոր արտադրանքի նորմաների քանակի ու վորակի կատարման այլպիսի անհերթաշնակությունը պատճառ դարձավ բնիքատության զգակի իշեցման, անհպատկանարմար ծախսվեցին աշխատող ուժերը և արտադրական ոլորտը ուղիղի չկատարվեց:

Միշենկոյի և Սիսնեկի բրիգադներում գործավարձի հիմական ձևն եր մանր-խմբակային գործավարձը Միշենկոյի բրիգադը գարնանացանի շրջանում վարողների ողակը կազմակերպեց 2 գութանից, տափանողների ողակը — 3 տափանից, իսկ յուրաքանչյուր խմբակ ուներ արտադրույթի

առնորյա առաջադրություն։ Շարքաներկ կոլտուրաների քաղհանի ժամանակ քաղհանողների խմբակում կար 5 մարզ։ Բնորոշ ե, զոր յեթե մանր-խմբակային գործավարձ կիրառվի, Միջնկոյի բրիգադը վարում եր 2—2,25 հեկտար, առաջ նույն կոլտնտեսության հարեվան բրիգադը աշխատելով մեծ խմբերով, սակայն այլ հավասար պայմաններում, մշակեց ընդամենը 1,25—1,5 հեկտար։

Յեթե բամբակի քաղհանի ժամանակ, մասր խմբակներով աշխատելով, մեկ կոլտնտեսականը մշակում եր 0,25—0,30 հեկտար, առաջ մեծ խմբերով աշխատելով, ամենամեծ արտադրութը հասավ 0,17—0,20 հեկտարի։ Միտնիկի բրիգադում գարնանացանի և քաղհանի ժամանակ ուժերի դասավորությունը նույնն էր, ինչ զոր Միջնեկոյի բրիգադում։

Քննենք այժմ Միտնիկի բրիգադի աշխատանքը բերքահավաքան կամպանիայի ժամանակ։

Ինքանափաքման համար խմբակում աշխատում եր 3 լորոքեյլա, զիգելիս խմբակը բաղկացած եր 3—5 հոգուց, մշտական դեղեր դնելիս—7 հոգուց։

Այդ ըրեգադներում արտադրույթի նորմաների կատարումը բերված է և 5 աղյուսակում։

